Մկրտիչ Արմեն

Հեղնար աղբյուր

Նախաբան

1

Լենինականի հին թաղերից մեկում՝ Ձորի Բողազում, որն ամենայն իրավամբ դեռ կարող էր կրել Գյումրի անունը, իր փոքրիկ տան մեջ մեռնում էր աղբյուրների հռչակավոր վարպետ ուստա Մկրտիչը:

Թեև նա արդեն վաթսունհինգ տարեկան էր, բայց ծերությունը չէր նրա մահվան պատճառը, որովհետև նա դեռ ամրակազմ էր և առողջ: Այնքան ամրակազմ էր նա և այնքան առողջ, որ թվում էր, թե ահա վեր կկենա, կհագնի իր ավանդական արխալուղը, կգնի իր ավանդական շափխան և մի անգամ շփելով իր պայծառ ճակատը, դուռը բաց կանի և նորից դուրս կգնա դեպի աշխարհ: Սակայն նա պառկել էր և մեռնում էր մահապարտի անխուսափելի և զնհետաձգելի մահով: Նա մեռնում էր, որովհետև հասել էր իր նպատակին, որովհետև վերջացրել էր իր հաշիվներն աշխարհի հետ: Նա դրսում այլևս ոչինչ չուներ անելու:

Իր վարպետության ողջ քառասուն տարիների ընթացքում նա ճիշտ այդպես էլ համոզված էր, որ երբ ավարտի իր քառասուներորդ աղբյուրը՝ պիտի մեռնի: Նա դիտմամբ էր նպատակ դրել այդպիս ի մեծ թիվ, որպեսզի հնարավորին չափ հեռու հրեր իր կյանքի վերջում կանգնած մթին ստվերը՝ մահը:

Երբ նա դեռ քսանվեց տարեկան էր և ավարտեց առաջին աղբյուրը՝ քառասունը նրան թվաց այնքա՛ն շատ և այն իրականացնելու վերջին կետն այնքա՛ն հեռու: Կառուցելով ևս չորս աղբյուր, նրան նույնիսկ թվաց, թե ինքը երբեք չի հասնի վերջինին, թե իր նպատակը կմնա կիսակատար: Եվ նա սկսեց զղջալ, որ իր վարպետության շեմքի վրա երդվել էր կառուցել քառասուն աղբյուր և ոչ թե յոթ կամ տասներկու . . .

Սակայն տարիներն ու աղբյուրներն աննկատելի շարվեցին, և նա մի օր մեծ զարմանքով նկատեց, որ արդեն կառուցել է քսաներորդ աղբյուրը, ուրեմն և, արդեն կիսով չափ կատարել է իր նպատակը:

Երեսունչորսերորդի վրա նա հիվանդացավ և հույսը կտրեց: Կարծում էր, թե դա վերջինը կլինի: Բայց հետո առողջացավ: Իսկ երբ առողջացավ, Նա ամենայն պայծառությամբ գիտակցեց, որ այժմ արդեն կառուցելու քիչ բան է մնացել և որ այլևս հարկ չկա շտապելու:

Եվ նա փորձեց չշտապել: Փորձեց, բայց ապարդյուն: Երեսունչորս աղբյուրի վրա նա միևնույն արագությամբ էր շարժել ուղեղն ու ձեռքերը և այժմ անհնար էր շարժման արագությունը փոխել: Ինչպես անցյալում, այնպես և ապագայում, նա պետք է կանգնեցներ տարեկան մի աղբյուրի որպես դեպի մահ տանող իր ճանապարհի ուղենիշ:

Երբ այդ գիտակցեց՝ նա հլու ենթարկվեց ճակատագրին: Տեսավ ու զգաց, որ անկարող էր փոխել իր մահվան ժամկետը, որը սակայն նա ինքն էր սահմանել իր համար . . .

Եվ նա շարունակեց կառուցել ու ափսոսալ, որ իր կյանքի երիտասարդ տարիներին նպատակ էր դրել քառասուն աղբյուր և ոչ թե յոթանասունյոթ կամ հարյուր ու մեկ: Այժմ նա համոզված էր, որ եթե նույնիսկ եռապատկեր աղբյուրների թիվը, դարձյալ կիրականացներ այն: Եվ նույն ներշնչումը, որը պահպանել էր նրա կյանքը քառասուն աղբյուրի համար, կպահպաներ նաև հարյուր քսանի համար:

Բայց այժմ այդ միտքն այլևս իզուր էր և միայն մի բան էր մնում ուստա Մկրտչին՝ մեռնել: Եվ նա մեռնում էր հանդարտ, տխուր և խորիմաստ մահով:

Այդ մահն սկսվեց վերջին աղբյուրը կառուցելուց անմիջապես հետո: Երբ կառուցումը լիովին ավարտվեց, ուստա Մկրտիչը հանկարծ զգաց, թե ինչպես պաղեց արյունն իր երակներում, և այնտեղ՝ իր ներսում, կոտրվեց մի բան՝ երևի կյանքի զսպանակը: Նա եկավ տուն, հանվեց, պառկեց, որպեսզի այլևս երբեք վեր չկենա . . .

***

Լենինականի հին թաղերից մեկում՝ Ձորի Բողազում, որն ամենայն իրավամբ դեռ կարող էր կրել Գյումրի անունը, իր փոքրիկ տան մեջ մեռնում էր աղբյուրների հռչակավոր վարպետ ուստա Մկրտիչը:

Տանը գտնվում էին նա և իր հարսը: Հարսն էր, որ բարձը դրել էր ուստայի մեջքի ետևը, և այժմ ուստան այդ բարձին հենված, լուսամուտից նայում էր դուրս՝ դեպի այն աշխարհը, որից ինքը շուտով պետք է հեռանար:

Նրա տունը կանգնած էր Ձորի Բողազի՝ այդ ոչ խոր ձորակի մեջ մի լանջի վրա, և այժմ նա լուսամուտից տեսնում էր իր տան առջևի անպարիսպ բակը և երկարահասակ բարդիների շարքը բակի առջևամասում: Բարդիների արանքներով նա տեսնում էր ցածրում գտնվող երկու այլ տների տափակ կտուրները, և կտուրներից այն կողմ՝ նորից բարդիների արևոտ գագաթները, որ խոյացել էին կտուրներից բարձր և ստվերի պատառներ էին գցել դրանց վրա: Այդ երկու տների արանքով նա տեսնում էր ձորակի տափակ ու լայն հատակի մի ընդարձակ պատառ՝ այնտեղով հոսող սակավաջուր առվակով: Այս ափի վրա երևում էր մի կին, որ ջրի վրա կռացած, կարպետ էր լվանում: Երևում էին կնոջ սպիտակ, լիքը ոտները: Ուստային թվում էր, թե նա նկատում էր նույնիսկ ծնկածալերի երկայնակի զույգ փոսիկները: Ուստան նայում էր դրանց, և նրա սիրտը լցվել էր անհույս մի կարոտ: Այդ առույգ ու գեղեցիկ ոտները հենց ինքը կյանքն էր, որ այլևս չէր վերաբերում նրան: Նայում էր ուստան և ցանկանում էր իր վերջին հայացքը դրանց վրա հառել մեռնելու պահին:

Բայց ահա և մի ձի, որ արածելով կարճ խոտը, մտնում էր նրա տեսողության շրջանակի մեջ: Ձիու յուրաքանչյուր շարժումից արևը խաղում էր նրա կրծքի և գավակի վրա: Ի՜նչ պիրկ և փայլուն մարմին, ի՜նչ ուժեղ ձի . . . Ահա փայլատակեցին նրա սպիտակ ատամները: Ահա նա թափահարեց գլուխը վեր ու վար, և նրա բաշը ցնցվեց: Ի՜նչ գեղեցիկ բաշ . . . Ոչ, ոչ թե կնոջ ոտներին, այլ այդ ձիու մկաններին պետք է հառել վերջին հայացքը՝ մեռնելու պահին:

Դիմացի լանջի վրա նույնպես տներ կային: Վերևում դրանք ձգվում էին երեք երկար փողոցներով, իսկ ներքևում կանգնած էին առանձին-առանձին, և դրանցից յուրաքանչյուրի առջևում նույնպես կային անպարիսպ բակեր և բակերի առջևամասերում՝ բարձր ու ոսկեգագաթ բարդիների շարքեր: Յուրաքանչյուր բակի մի ծայրում ջրհորն էր, մյուսում՝ հավաբունը, իսկ մեջտեղում, երկար շղթայով մի ծառից կապված, նիրհում էր հավատարիմ գամփռը:

Նայում էր ուստա Մկրտիչը մորմոք կարոտով այդ աշխարհին: Նա այդտեղ էր ծնվել և ահա այդտեղ էլ մեռնում էր: Նա այդտեղ էր սկսել իր վարպետությունը: Ահա լուսամուտից երևում է նրա կառուցած առաջին աղբյուրը . . .

Կառուցված էր այդ աղբյուրը մի հովասուն ուռենու տակ, դիմացի փողոցներից մեկի եզրին: Մի մեծ խորանարդ քար կազմում էր աղբյուրի գլուխը, և խողովակը դուրս էր գալիս դրա միջից: Կարճ, լայն, փայլուն խողովակ էր դա, որից ահա քառասուն տարի էր, որ հորդ հոսում էր ամենավճիտ ջուրը և թափվում էր իր առջևի քարե գուռի մեջ: Գլխաքարը ձեռքերի շփումից, և գուռը՝ ջրի հպումից հղկվել էին ու փայլում էին ձյութածի պես: Գլխաքարը կարմրավուն լեռ քար էր, և թվում էր, թե գյումրուհիների ձեռքերի ջերմությունից էր այն կարմրել, իսկ գուռը կապտավուն լեռ քար էր, և թվում էր, թե ջրի սառնությունից էր այն կապտել:

Ուստա Մկրտիչը չէր կարող ասել, թե ինչն էր տեսնում և ինչն էր հիշում, բայց ահա այդ ամենն իր աչքի առջև էր՝ վառ ու կենդանի . . .

Դիմացի լանջի վերևում, փողոցներից մեկում, փոշի բարձրացավ: Բարձրացավ փոշին և արագ առաջացավ դեպի այն կողմ, որտեղ ձորը հետզհետե ցած բանալով, աննկատելի ձուլում էր իր փողոցները քաղաքի փողոցներին: Ի՞նչ փոշի էր դա, երբ քամի չկար, և անշարժ էին բարդիների գագաթները: Դա,

իհարկե, ավտո էր անցնում սրընթաց:

Եվ իրոք, ահա տների արանքով մի վայրկյան երևաց այն, լսվեց դրա ճչակը, որ նախազգուշացնում էր փողոցի մեջտեղում խաղացող երեխաներին . Հեռո՛ւ . . . Կընկնեք ավտոյի տակ, կմեռնեք . . . Ծանր, անդառնալի բան է մահը, հեռո՛ւ, հեռո՛ւ . . .

Նա դեռ անթարթ նայում էր լուսամուտից դուրս և նրա աչքերի առջև դեռ աշխարհն էր, երբ դրսում՝ նրա տան նախասենյակում, լսվեցին խոսակցության շտապ ձայներ և անմիջապես սենյակ լցվեցին նրա հին ընկերները:

Մկրտի՞չ . . .

Ուստա Մկրտիչը նայեց նրանց:

Այ մարդ, էս ի՞նչ կէնես, ընչի՞ ես պառկե . . .

Վերջի պառկն է, ներող էղեք, ասաց ուստան . նստեք: Հարս ջան, աթոռք տու . . .

Հարսն աթոռները մոտեցրեց անկողնին և ինքը նորից դուրս գնաց: Ըստ երևույթին, նախասենյակում կամ մյուս սենյակում նա աշխատում էր:

Դուն իմ քովս նստի, հաջի, դիմեց ուստան մեկին, որ պատրաստվում էր նույնպես նստել աթոռի վրա:

Տիրեց հանկարծակի լռություն: Բոլորը հասկացան, որ իրոք մեռնում է ուստան, եթե նա ներեց այդ մարդուն և հրավիրեց իր անկողնի վրա:

Եվ երբ հաջին նստեց, ուստան դիմեց բոլորին .

Ու էդ մասին՝ էլ հեչ խոսք չէղնի . . . Է, ի՞նչղ է ձեր քեֆը, ախպեր տղեք . . .

Մեր քեֆն ի՞նչ, դուն քուկդ ըսա, պատասխանեց Ավետիքը, որի կյանքն անցել էր կամուրջներ կառուցելով: Ըսել է՝ պառկար, էլի, Մկրտիչ ախպեր . . . Է՛, մենք էլ ահան կլսենք ուղտի նռռոցը: Կուգա, օր էգվան էլ մեր դռանը չոքի . . .

Պառկա . . . . նպատակս կատարված է . . . Մնալն ավելնորդ է . . .

Ուստան վերմակի տակից հանեց իր սպիտակած ձեռքը, որ նկատելի դողդողում էր, և շարունակեց .

Ես հլը ջաել վախտս երդմունք էի կերե, օր քառսուն ախպուր պիտի շինեմ: Սեդրակը տեղակ էր՝ լուս իջնի էնոր գերեզմընին: Գևորն էլ էր տեղակ՝ ասպած օղորմի ազիզ Գևորիս հոգուն: Միխակն էլ գիտեր՝ Ֆոնճոնց Միխակը: Սիմավոնին էլ էի ըսե . . .

Հանկարծ ուստան հենվեց մի թևի վրա և տեղից բարձրացավ .

Ի՞նչ բան է, հե՞չ մեկը չէ մնացե, բոլորն էլ մեռա՞ն . . .

Ես էլ եմ տեղակ, շշնջաց մեկը:

Ուստան հանգստացած իջավ դեպի բարձը .

Դուն էլ ես տեղակ, Ավետիք, ճշմարիտ է . . .

Նա լռեց մի քիչ, ապա ավելացրեց .

Ու էսպեսով, իմ ախպուրս էլ ցամքավ . . .

Կարոն, որի կյանքն անցել էր տներ կառուցելով, ծանր հառաչեց ու խոսեց .

Աշխըրքի օրենքն է էդպես, Մկրտիչ: Բոլորի ախպուրն էլ մե օրըմ պիտի ցամքի: Հմը մարդ կա, օր իրան ետևեն հիշատակ ունի, մարդ կա, օր չունի: Քու ախպուրդ ցամքավ, հմը քառսուն հատ կա քու տեղակդ: Էնոնք քեզի կօրշնեն քառսուն բերնով: Ջրեդ խմող ամմեն մարդ քեզի պիտի հիշե հուր-ավիտյան . . .

Սակայն ուստա Մկրտիչը չէր լսում նրան: Անշարժ հայացքը մի կետի հառած և ուշադրությամբ ուրիշ տեղ վերացած, նա կրկնեց ինքնիրեն .

Իմ ախպուրս էլ ցամքավ Հեղնար ախպուրի պես . . .

Բոլորը քարացան: Տիրեց հանկարծահաս, երկարատև լռություն: Վաղուց, շատ վաղուց էր, որ նրանք չէին արտասանել և չէին լսել Հեղնար աղբյուրի անունը: Եվ այժմ նրանց աչքի առջև վերակենդանացավ հեռու անցյալը . . .

Հեղնար աղբյուրը . . . Այն չէր մտնում ուստայի կառուցած քառասուն աղբյուրների շարքը և չէր էլ կարող մտնել՝ այնքա՛ն արտասովոր, այնքա՛ն զարմանալի և այնքա՛ն անհասկանալի էր այն . . . Եվ այդպես անհասկանալի էլ նա մնացել էր անցյալին, որովհետև Հեղնար աղբյուրն այլևս համարյա գոյություն չուներ աշխարհի վրա: Համենայն դեպս, դրա հրաշքը, որ տեղի էր ունեցել քսան տարի առաջ, վերացել էր նույն օրը և այնուհետև չէր կրկնվել երբեք:

Հեղնար ախպուրը, շշնջաց Բագրատը, հաստատ օր, ախպըտինք, Հեղնար ախպուրը . . .

Դրա պատկերը բոլորի ուղեղներում հանկարծ վերակենդանացավ պայծառ ու որոշակի, և նրանք զարմացան շատ ավելի, քան այն օրը, երբ հրաշքը տեսնում էին աչքերի առաջ: Այն ժամանակ մարդիկ հավատում էին գերբնական երևույթների, և հրաշքի հայտնվելը բնական էին համարում: Իսկ այժմ դա թվում էր այնքա՛ն անհավանական . . .

Աղասին, որի կյանքն անցել էր ջրհորներ փորելով, վեր կացավ աթոռից և նստեց մահճակալի վրա՝ հաջու մոտ:

Մկրտիչ ախպեր, ասաց նա, մենք ամմենքս էլ քու ախպեր տղեքդ ենք ու օտար մարդ չկա իստեղ: Իսկ դուն, վո՞վ գիտե, գուցցե թե իսկապես, պիտի նստիս դռանդ չոքած ուղտի վրա ու էրթաս խառնվիս ավիտենական քյարվընին: Ըսա մեզի, Մկրտիչ ախպեր, գոնյա հիմի ըսա, թե էդ ի՞նչդ էղավ, օր հրաշքը պատահավ: Չէ՞ օր դուն ինքդ էիր շինե Հեղնար ախպուրը: Իսկ հրաշքն ախր ասպածային բան է . . .

Ուստա Մկրտիչը նկատելիորեն մռայլվեց: Ու մինչդեռ բոլորն անակնթարթ սպասում էին, նա սկսեց երկար, շատ երկար մտածել: Մի պահ թվաց, թե նա բոլորովին էլ չէր մտածում և երբեք էլ չէր պատասխանելու այդ հարցին: Բայց նա վերմակի տակից նորից հանեց ձեռքը, որն այժմ ավելի էր դողդողում, և

ասաց .

Ախպուրը ձեռացագործ է, հրաշքը՝ անձեռացագործ: Իմ շինածս մեննակ սովորական ախպուրն էր, հմը անսովոր հրաշքն ասպած ինքն էր դրե էնոր մեջ: Ես ի՞նչ ըսեմ ձեզի, ախպեր տղեք, եբ օր ես ինքս էլ մեննակ էդքանը գիտեմ: Ոնչ ասպած կրնա ախպուր շինե, ոնչ մարդը՝ հրաշք: Ես հողածին եմ, ես կրնամ պարզե մեննակ իմ ախպուրս, ասպած էլ թող պարզե իրան հրաշքը՝ թե օր կամենա . . .

Ու թե օր մենք արժանանանք էնոր տեսութանը, ավելացրեց Սարգիսը՝ հառաչելով: Ամմեն մեկիս մե ուսի վրա մե բեռըմ մեղք կա կամա, մեկել ուսի վրա մե բեռըմ մեղք՝ ակամա . . .

Իսկ իմ մեջքիս վրա մեննակ մե բեռըմ մեղք կա, ծանր արտասանեց հաջին, որ մինչ այդ լուռ էր և այժմ շատ գունատված, հմը էդ մե բեռն աշխըրքի մեղքը կկշռքե . . .

Ուստա Մկրտիչն իր ձեռքը դրեց նրա ձեռքի վրա .

Մեղավորը ես եմ, հաջի: Ես ինքս ըսի, օր էդ մասին խոսել հարկավոր չէ, հմը ինքս էլ բացի էս խոսակցութունը: Ներող էղի . . .

Ապա թախիծով ժպտաց և շարունակեց .

Մարդու սիրտը տան պես է: Ընձի իմաց են տվե, օր տունս շուտով պիտի քանդըվի: Իմաց են տվե, օր էրեխոցս դուս հանեմ: Է՛, ես քառսուն էրեխա ունիմ, էնոնք էլ դուսն են: Էլ վո՞վ է մնացել նեսը . . . նես աշեմ, տեսնիմ՝ լիքն են: Էդոնք իմ խոսքերս են, օր հնարք չեմ ունեցե դուս բերելու: «Դուս հանե էրեխոցդ, կըսեն ընձի, տունդ քարուքանդ պիտի էղնի, ուստա Մկրտիչ» . . . Է՛, ես որի՞ն դուս հանեմ, ժամանակ չէ մնացե: Տե՛, ես էլ դուս հանեցի իմ ամմենքեն սիրած, հիվանդ ու վիրավոր էրեխիս: Ներող կէղնիս, հաջի . . .

Որպեսզի խոսակցությունը մի այլ կողմ թեքի և հաջուն դուրս հանի ծանր վիճակից, Օնեսը հարցրեց .

Էրեխա ըսիր, միտս ընկավ՝ տղեդ չպիտի՞ արժանանա քու տեսութանդ . . .

Հարսս հեռագիր էր տվե: Պատասխանն ստացանք: Ճամփա է ընկե: Կհասնի՞, թե չի հասնի՝ ասպած գիտե: Մասկվայից մինչև իստեղ չորս օրվա ճամփա է, հմը իստից մինչի երկինք՝ չորս րոպվա . . .

Մկրտի՛չ, հանդիմանական և հարցական դիմեց նրան Աղասին, ի՞նչ ես գլուխդ քցե՝ մեռնիմ, հա մեռնիմ: Մե գուցցե ասպած տվեց, վեր ելար . . .

Ուստան անհույս կերպով ձեռքը թափահարեց և լուռ մնաց: Նրա շնչառությունը հազիվ էր նկատվում: Մի քանիսը վեր կացան, մոտեցան լուսամուտին, բացեցին այն, սկսեցին ծխել և կիսաձայն խորհրդակցել, թե որքան կյանք է մնացել ուստային: Ապա Օնեսը գնաց դեպի դուռը և կանչեց հարսին:

Լսե, աղջիկ ջան, ասաց Օնեսը նրան, բայց նկատելով նրա կարմրած աչքերը, ընդհատեց ասելիքն ու խրատեց, մի լա, բնության օրենքն է էդպես, իսկ Մկրտիչն էլ վենձ մարդ է: Ընչի՞ կտանջվիս: Գնա, գնա լվացվի, արի հիվընդի քովը: Մենք հիմի կէրթանք: Իրիկվա կողմը նորից կուգանք: Հմը, բան է, եթե մինչի էդ ուստի դրութունը գեշըցավ, դրկցի մանչու հետ մեզի իմաց տու, մենք բոլորս էլի ինտեղ ենք՝ շինության վրա . . .

***

Լենինականի հին թաղերից մեկում՝ Ձորի Բողազում, որն ամենայն իրավամբ դեռ կարող էր կրել Գյումրի անունը, իր փոքրիկ տան մեջ մեռնում էր աղբյուրների հոչակավոր վարպետ ուստա Մկրտիչը:

Երբ այցելության եկած նրա ընկերները գնացին, նա շարունակեց պառկած մնալ անզգա, անշարժ: Թեև նա չէր կորցրել իր գիտակցությունը, բայց անտարբեր էր դարձել դեպի աշխարհը: Այլևս ոչ մի միտք չէր հուզում նրան, ոչ նույնիսկ հեղնար աղբյուրի հուշը: Այժմ նրա ուղեղի փակվող դարպասից ներս էր սպրդում միայն այն, ինչ որ գտնվում էր անմիջապես նրա տեսողության դաշտում, նրա աչքերի առջև: Իսկ այնտեղ գտնվողն այժմ արդեն ոչ թե դրսի ամբողջ

տեսարանն էր, այլ լոկ աղբյուրը՝ նրա ուղեղի և ձեռքերի առաջին գործը . . .

Հինգ տարի ուրիշ վարպետի մոտ աշակերտություն անելուց հետո քսանվեց տարեկան երիտասարդ Մկրտիչն ավարտեց այն որպես իր առաջին ինքնուրույն աշխատանքը: Հավաքվեցին Գյումրու հռչակավոր վարպետները, զննեցին աղբյուրը, ցնցեցին գլխաքարը՝ ամո՞ւր է արդյոք, խմեցին ջրից՝ սա՞ռն է արդյոք, ապա նրանցից մեկը ձեռքով փակեց խողովակի բերանը՝ ջուրը «ետ չի՞ խփի», չի ընդհատվի արդյոք:

Փակել աղբյուրը, ինչպես հայտնի է, ծանր մեղք է, բայց ոչ ուստաների համար, որոնք ստուգում են աշկերտի աշխատանքը: Եվ երբ ուստան իր ձեռքը ետ տարավ խողովակից, բոլորը տեսան, որ ջուրն այնտեղից շարունակեց հոսել հանգիստ և հավասար . . . Մկրտչին ձեռնադրեցին ուստա: Հենց աղբյուրի մոտ էլ, գետնի վրա, նորընծա ուստան բաց արեց սփռոց, ճոխ հրավերք սարքեց նվագով ու օղիով, նշանավորեց իր վարպետության առաջին օրը . . .

Մկրտչի մայրը վաղուց էր որոշել, որ երբ որդին դառնա ուստա՝ իսկույն ամուսնացնի նրան: Տարիների ընթացքում նա հաճախ էր ընտրել, աչքի տակ առել ձորիբողազցի այս կամ այն աղջկան, բայց կանգ չէր առել ոչ մեկի վրա: Վերջապես նա վճռել էր, որ աղջկա ընտրությունը ոչ թե կատարի ինքը, այլ թողնի աստծու կամքին: Ուստի և, աղբյուրի գոյության առաջին օրը, վաղ առավոտյան, մայրը Մկրտչին ուղարկեց աղբյուրի մոտ՝ տեսնելու, թե աղջիկներից ով է առաջինը ջուր վերցնելու այնտեղից: Ով որ լինի առաջինը՝ թող նա էլ, աստծու կամքով, դառնա ուստայի կինը:

Հեղնարը, որի վրա վաղուց աչք ուներ Մկրտիչը, եկավ երրորդը: Երիտասարդ ուստան ծանր հառաչեց և վերադարձավ տուն: Առաջին աղջիկը տգեղ էր, տգեղ էին Մկրտչի համար Ձորի Բողազի բոլոր աղջիկները՝ բացի Հեղնարից: Բայց այդ էր նրա բախտը, այդպես էր կամեցել աստված . . .

Վո՞վ է, հարցրեց մայրը:

Մկրտիչը լռեց մի պահ և ապա, ինքն էլ չիմանալով, թե ինչպես, ասաց հանկարծակի .

Հեղնարն է, մայրիկ . . .

Ասաց և սարսափեց իր կատարած հանցանքից: Խաբել մորը, չհնազանդվել աստծու կամքին . . . Կպատժի աստված նրան այդ բանի համար, երջանկություն չի ունենա նա կյանքում . . .

Բայց խոսքը նման է նետված քարի, թռած թռչունի — ետ չի դառնա . . .

Երկու օր հետո ուստայի մայրն իր բարեկամ մի քանի կանանց հետ միասին գնաց Հեղնարին ուզելու: Աղջկա ծնողները, գեղեցկուհի Հեղնարի համար սպասելով ավելի լավ փեսացուի, մերժեցին տալ նրան դեռ անհայտ ապագայի տեր ինչ-որ երիտասարդի:

Սոսկալի վիրավորված, Մկրտչի մայրը վերադարձավ տուն՝ արդեն ճանապարհին մտածելով, թե ինչ կերպ վրեժ լուծի ամբարտավաններից:

Չանցավ նույնիսկ մի օր, և ամբողջ Ձորի Բողազով տարածվեց նորությունը . Մկրտչի մայրը գնացել է Հեղնարին ուզելու իր տղայի համար, բայց նկատել է, որ աղջիկը հիվանդ է «բարակ ցավով», և վերադարձել է առանց ուզելու . . .

Հեղնարի անունը միանգամից կոտրվեց: Հարսնախոսների անընդհատ հոսանքը նրանց տուն կտրուկ ընդհատվեց: Հեղնարը, ի ծնե թախծոտ և զգայուն, ծանր ազդվեց այդ դեպքից և իրոք հիվանդացավ, պառկեց մի քանի ամիս:

Մկրտչի մայրն այլևս չհամարձակվեց ուրիշ աղջիկ ընտրել աստծու ընտրածի փոխարեն: Մկրտիչը գոհ էր դրա համար և պատրաստ էր ամուրի մնալ իր ամբողջ կյանքում, որովհետև ոչ ոքի չէր ուզում՝ բացի Հեղնարից: Իսկ Հեղնարին մերժել էին տալ նրան: Երևի դա աստված էր պատժում նրան՝ նրա ոտի համար . . .

Անցավ երեք տարի: Այդ ժամանակամիջոցում ուստայի մոր բարկությունն իջավ և նա նորից սկսեց մտածել դատողաբար: Ոչ կարելի է աստծու կամքից դուրս գալ, ոչ էլ երիտասարդ տղային ընդմիշտ թողնել ամուրի . . .

Նորից հավաքելով իր բարեկամ կանանց, նա գնաց երկրորդ անգամ Հեղնարին ուզելու . այժմ հաստատ համոզված լինելով, որ «անունը կոտրված» և «տանը մնացած» աղջկա ծնողներն այլևս չեն համարձակվի մերժել նրան: Նա մեծ շնորհ է անում՝ նրանց հիվանդոտ աղջկան ուզելով, իսկ դրա միակ պատճառն այն է, որ Հեղնարը Մկրտչի բախտն է, աստծու որոշածը: Եթե դա չլիներ, տղայի մայրը չէր էլ հիշի այդ նիհար ու տխուր աղջկան . . .

Եվ իրոք, Հեղնարի ծնողներն այս անգամ չմերժեցին, այլ իսկույն տվեցին իրենց համաձայնությունը: Հեղնարը դարձավ ուստա Մկրտչի կինը . . .

Ահա թե որքան հուշեր էր առաջացնում այդ աղբյուրը՝ նրա ուղեղի և ձեռքերի այդ առաջին գործը . . .

Ջուրն այնտեղ հոսում էր զարմանալի վճիտ, ավելի վճիտ, քան երբևէ: Թվում էր, թե ջրի փոխարեն ուստա Մկրտչի կյանքն էր հոսում այնտեղ, և ահա այդ էր պատճառը, որ ուստան սպառվել էր ու մեռնում էր: Բայց փակել խողովակը՝ նա չէր ցանկանում՝ նույնիսկ այդ րոպեին:

Իսկ հետո թվաց, թե այնտեղ հոսողը բոլորովին էլ իր կյանքը չէր, այլ երկրի ուժը, որ նշանակված էր նրա զավակների երակները կյանք լցնելու համար: Իսկ ինքը՝ ուստա Մկրտիչը, մի սովորական գյումրեցի էր, որին սակայն վիճակվել էր բաց անել այդ ուժի քառասուն ակունքներն իր ժամանակակիցների համար, իր երկրակիցների համար: Եվ նա գոհ էր այդ մեծ, այդ բարձր պատվից . . .

Վերջնականապես փակվելուն արդեն բոլորովին մոտ, հանկարծ նորից, գուցե միայն մի քանի րոպեով, ետ գնացին ուստա Մկրտչի ուղեղի դարպասափեղկերը և ուստան իր առաջին աղբյուրից հետո հիշեց նաև ճամփակեսի՝ քսանմեկերորդ աղբյուրը և վերջին՝ քառասուներորդ աղբյուրը, որոնք նույնպես, նրա կյանքի համար ունեցել էին կարևոր նշանակություն:

Քաղաքի գլխավոր փողոցներից մեկի վրա գտնվում էր մի շենք՝ մյուսներից տարբեր: Մինչդեռ բոլոր մյուս շենքերը կանգնած էին միահավասար շարքով, այդ մեկը գտնվում էր ավելի ետ՝ խորն ընկած: Շենքի առջևում գոյացած արձակ տարածությունը փորված էր մի հարկի խորությամբ, շարված էր սևաքար

պատերով և մայթի պռունգից մի քարե սանդուղք իջնում էր դեպի այդ քառանկյունի փոսը: Փոսում, սանդուղքի վերջին աստիճանների դիմաց, խուլ պատի միջից հանված էր մի խողովակ:

Դա ուստա Մկրտչի քսանմեկերորդ աղբյուրն էր:

Փոսի հատակն ամբողջովին, աղբյուրի դուռն էր՝ ջրով լի, որը մշտապես թրջում էր սանդուղքի վերջին աստիճանը:

Երբ ջուր խմելու համար ներքև իջած անցորդը նայեր վերև, նա կտեսներ տախտակե պատշգամբը, որը շենքից ձգվելով դեպի մայթ, առաստաղի պես ձածկել էր այդ փոսը կիսով չափ:

Աղբյուրի ճակատին, սևաքար պատի մեջ, դրված էր մի կարմիր քար՝ փորագրված տառերով: Այնտեղ տանտերը թողություն էր խնդրում իր մեղքերին և աղերսում էր անցորդներին՝ բարեմաղթել իր հոգու համար: Աղերսի տակ աղբյուրի փայլուն, դեղին խողովակն էր, որի ներսն արծաթավուն էր կարծես ջրով զօծված: Խողովակը մեջտեղում ուռուցիկ էր, արմատի ու բերանի մոտ՝ նեղ, իսկ պռունգները՝ լայն երկճեղքված, խողովակը նմանեցնելով գոյություն չունեցող կենդանու բերանի: Ջուրն այնտեղից թափվում էր բուդխ, և զգացվում էր, թե ինչպես ջրի հետ միասին, խողովակից դուրս էր գալիս նաև ցուրտ թարմությունը:

Դա միակ աղբյուրն էր, որի կառուցման համար հետագայում այնքա՛ն զղջացել էր ուստան: Աշխատելիս նա չէր ըմբռնել, թե ինչ է կառուցում, որովհետև տան և աղբյուրի ձևը հնարել էր ոչ թե ինքը, այլ տան տերը: Իսկ երբ ըմբռնել էր՝ այլևս ուշ էր եղել: Եվ ուստային մնացել էր միայն անիծել, որ աղբյուրի ջրի նման երկար լիներ տանտիրոջ ոչ թե կյանքը, այլ կյանքի դառնությունը, որ անցորդներն աղբյուրի ճակատին կարդային ոչ թե աղերսի խոսքեր, այլ հայհոյանք, որ աստված նրանցից լսեր ոչ թե բարեմաղթություններ, այլ նզովք . . . Իսկ երբ իջել էր ուստայի բարկությունը, նա դադարել էր անօգուտ անիծելուց և թքելով այդ տան ճակատին, այլևս չէր անցել դրա մոտով . . .

Եվ իրոք, ջուր խմելու իջնող ամեն անցորդի այնպես էր թվում, թե նա հանում է այդ հանդիսավոր տան հպատակության տակ: Ջուր խմելու թեքված ամեն

անցորդի այնպես էր թվում, թե նա խոնարհվել է երկրպագության: Ջուր խմող ամեն անցորդի այնպես էր թվում, թե նա ծծում է հնազանդության թույնը: Եվ ջուր խմած ամեն անցորդի այնպես էր թվում, թե նա դատապարտված է անդառնալի:

Հեղափոխությունից հետո, ազատագրության առաջին իսկ օրը, ուստան վերցրել էր իր սրածայր մուրճը և շտապել էր այնտեղ ոչնչացնելու աղբյուրի գլխագիրը: Բայց հասնելով տեղ, նա տեսել էր, որ իրենից առաջ, ո՛վ գիտե ովքեր, արդեն ոչ միայն ջնջել էին գլխագիրը, այլև կտրել, վերացրել էին ատելի պատշգամբը: Տասնհինգ տարուց հետո առաջին անգամ արևը խազում էր ոսկեդեղին խողովակի հետ:

Եվ ահա այդ էր եղել պատճառը, որ ուստան ազատագրության առաջին իսկ օրվանից գնացել էր՝ ուր որ կանչել էին նրան, և աշխատել էր: Աշխատել էր, կառուցել էր իր վերջին աղբյուրները, և երբ մնացել էր միայն ամենավերջինը, նա մի օր, կարմիր քարափոշով ծածկված գոգնոցը հագին, ներկայացել էր տեքստիլ գործարանի վարչությանը:

Տեքստիլ գործարանի թաղամասում բոլոր բնակարաններն ու հիմնարկներն ունեին ջրի ծորակներ: Ուստա Մկրտիչն ինքն էր կավե լայն խողովակներով ջուրը բերել թաղամաս և թողել, որ ուրիշ, նոր արհեստավորներ, երկաթեե նեղ խողովակներով բաժանեն ջուրը բոլոր շենքերին: Եվ բոլոր շենքերը ջուրն ստացել էին լիուլի:

Բայց, չնայած դրան, ուստան միտք էր հղացել մի սովորական աղբյուր կանգնեցնել դրսում, փողոցներից մեկի անկյունում: Վարչությունը, աշխատելով չվիրավորել սիրված վարպետին, զգույշ մերժել էր նրա առաջարկը՝ աղբյուրը համարելով ավելորդ:

Ավելնորդս ո՞րն է, վրդովվել էր ուստան, թող ջուրն իրան հմար վազզե, ձեզնեն ի՞նչ կէրթա: Ճամփորդ կանցնի՝ կխմե, վռազ մարդ կանցնի՝ կխմե, վառված սիրահար կանցնի՝ կխմե . . . Էդոնք խո չե՞ն կրնա ամմեն րոպպե մտնի տները ժանգոտ ջուր խմելու . . .

Վարչության մեջ Ժպտացել էին ուստայի հայտնի արհամարհանքի վրա երկաթե խողովակների ու ծորակների հանդեպ, բայց պնդել էին մերժումը՝ առարկելով, որ չկա ավելորդ գումար՝ ճամփորդների, վռազ մարդկանց և սիրահարների համար աղբյուր կառուցելու:

Այդ ժամանակ ուստան հայտնել էր, որ ինքը կաշխատի մեն-մենակ, արտաժամյա, առանց որևէ վարձատրության, բայց աղբյուրն անպայման կկառուցի: Եվ նա սկսել էր աշխատել բանթողի ժամերից մինչև մութն իջնելը՝ աշխատանքի ընթացքում հետզհետե ավելի համոզելով, որ այդ աղբյուրն այդպես էլ պետք է կառուցվեր՝ միայն իր աշխատանքով, բոլորովին ձրի, իբրև նվեր . . . Չէ՞ որ դա իր վերջին, ամենավերջին աղբյուրն էր . . .

Ինչպես իր բոլոր մյուս աղբյուրների, նույնպես և այդ վերջինի գլխաքարի վրա ուստան իր ձեռքով էր քանդակել բառերը: Պսակազարդ շրջանակի մեջ նա վիմագրել էր . «Կառուցավ հաղբյուրս այս ի արտա ժամու, վասն շնչո փրկութան՝ ուստա Մկրտիչը»:

Գործարանի վարիչի այն խորհրդին, թե բանվորներն այդ չեն հասկանա և ավելի լավ կլիներ գրել աշխարհաբար, ուստան խրատական-հանդիմանական խիստ տոնով պատասխանել էր .

— Թող էդ մե էրկու խոսքն էլ գրաբառ սորվին, բերընները չի ցավի, իրանց պապերու լիզուն է . . .

«Վասն շնչո փրկութան»-ը նույնպես ուներ իր պատմությունը: Ինչպես բոլոր նման դեպքերում, ուստան պատրաստվում էր գրել «Վասն հոգվո փրկութան», սակայն շտապ վրա հասած բազմաթիվ երիտասարդ բանվորներ և բանվորուհիներ խնդրեցին նրան՝ այդ բանը չանել: Բացատրել էին, որ հոգի չկա, որ մարդու մեջ եղածը շունչ է, և որ դա բնությունից է և ոչ թե աստծուց: Ուստան լսել էր ուշադիր, առանց հակաճառելու, ապա թախիծով պատասխանել էր .

Մարդու մեջ մե բանըմ կա, օր իրան հետ չպիտի մեռնի, օր մարդու մեռնելեն ետև պիտի փրկրվի: Կուզեք՝ հոգի ըսեք էդոր, կուզեք՝ անուն, կուզեք՝ գործ, կուզեք՝ շունչ . . . Ես ախպուրս կշինեմ էդ մե բանի փրկութան համար . . .

Եվ հենց իսկույն, բոլորի ներկայությամբ, ավանդական «հոգու» փոխարեն նա քանդակել էր իր «շունչ»-ը:

Եվ ահա, ուստայի պառկելուց միայն մի օր առաջ, բոլորովին պատրաստ կանգնել էր նրա վերջին՝ քառասուներորդ այդ աղբյուրը: Կյանքի ճանապարհը, որ անցել էր ուստան և ավարտել, այժմ լրիվ լուսավորված էր քառասուն ջահերով՝ նրա քառասուն անապակ աղբյուրներով, որոնք այնքա՛ն պատմել էին և դեռ այնքա՛ն պիտի պատմեին հռչակավոր ուստայի մասին, որոնք վառ պիտի պահեին նրա գործն ու անունը:

Բայց հանկարծ նրան այնպես թվաց, որ իր հետ միասին մեռնելու էին թե՛ իր գործը և թե՛ անունը, և դրա պատճառը լինելու էր մի հին, վաղուց անցած բան . . . Այդ միտքն այնպիսի ուժգնությամբ շանթեց-մեխվեց նրա ուղեղում, որ նա ցնցվեց, սթափվեց և տագնապով ձայն տվեց դեպի դուռը .

— Հա՛րս, ա՛յ հարս . . .

Հարսն արագ մտավ ներս .

Ի՞նչ, հայրիկ . . .

Արի:

Հարսը մոտեցավ և վախն աչքերի մեջ՝ կանգնեց նրա մահճակալի մոտ .

Նստի: Մարդ խո չկա՞ էն սենյակը:

Գևորի մերն է:

— Էկել է, օր մեննակ չմնաս, հասկացավ ուստան: Լավ է էրե: Ըպը քովս ընչի՞ չի գա՝ իրանեն բարև տանիմ մորս . . .

Դուն քնած էիր: Կուզե՞ս կանչեմ:

Քնած չէի, հմը էլ մի կանչե: Ես քեզի բան պիտի ըսեմ . . . Նստի՛ . . .

Հարսը նստեց ուստայի մահճակալի վրա՝ լարված, սպասողական, իսկ մինչ այդ, ուստայի դեմքի վրա ակնհայտ նկատվում էր անվճռականությունը՝ խոսե՞լ, թե ոչ: Դեռ գուցե կգա՞ իր տղան . . .

Չէկա՞վ, հարցրեց նա՝ երկար լռությունից հետո:

Հլը գնացքի վախտը չէ:

Իսկ իմ գնացքիս վախտն է . . . Է՛, չէղավ, հարս . . .

Դուռը կիսաբաց եղավ և մի պառավ գլուխը թեքեց դեպի ներս: Հարսը ձեռքով նշան արեց նրան, որ չմտնի, որից հետո դուռն իսկույն ծածկվեց:

Ուստա Մկրտիչը չնկատեց այդ և շարունակեց .

Դուն շատ լավ գիտես, օր ես նեղեցած եմ իմ տղիցս ու քու մարդուցդ: Էնիկ գոռոզ էղավ, էնիկ չհավնավ իմ գիտութանս, գնաց, օր ախպուր շինելու արեստն ուրիշներեն սորվի, ոնչ թե ընձնեն: Լավ չէրավ . . .

— Հայրիկ, ախր էնտեղ պրաֆեսորները դաս կուտան էնոր . . .

Պրաֆեսորնե՞րը . . .

Ուստան ձեռքը հանեց վերմակի տակից և դողդողացող մատները բռունցք հավաքելով, ուժեղ խփեց իր կրծքին .

Ե՛ս եմ ամենավենձ պրաֆեսորը: Թող սորվի ումեն օր կուզե, հմը առանց իրան հոր գիտութանը՝ էնոր ուսմունքն արժենք չունի . . .

Ուստան նկատելիորեն հուզվեց, կակազեց և խոսքն ընդհատեց: Ըստ երևույթին նա դժվարանում էր շարունակել՝ վախենալով ծանր խոսքեր ասել որդու հասցեին: Բավական ժամանակ մնաց լուռ, իսկ երբ նորից խոսեց, նրա ձայնը խաղաղ էր, վախեցնելու չափ խաղաղ:

Թե օր գար, թե օր հասներ, ես ինքս կխոսեի հետը, կսորվեցնեի ամմեն բանը: Թող հիմի բանի տեղ չդներ, հմը էգվան առանց էդոր յոլա էրթալ չպիտի

կրնընար . . . Ժամի քա՞նիսն է, հարս . . .

Հարսը վեր կացավ և մոտեցավ կոմոդին, որի վրա, ընտանեկան հին լուսանկարների, թղթե ծաղիկների, գիպսե կատվի և նապաստակի միջև տկտկում էր սեղանի ժամացույցը:

Ետ արի, հարս, հարկավոր չէ, շտապ կանչեց ուստան, ես իմացա ժամը, իրեք րոպպե է պակաս . . .

Երբ հարսը վերադարձավ ու նստեց՝ չհասկանալով ուստայի խոսքերի իսկական իմաստը, նա շարունակեց .

Տղիս կըսես, օր եթե, վո՞վ գիտե, մե դժվարութանըմ հանդըպի, թող քանդե իմ քառսուն ախպուրներես որն օր կուզենա ու թող սորվի էնոր հնարքները: Կըսես, օր թող չխնդա իրան հոր վրա ու մտեհան չէնե էնոր: Կըսես, օր մեռնելուս րոպպեին իմ սիրտս խռոված չէր էնոր հետ: Վերջի մնաս բարովն ու պռոշտիս մտեհան չէնես . . .

Ուստան լռեց: Հարսը սարսափած նայեց նրան, բայց նա դեռ չէր մեռել: Նա մտածում էր: Եվ հանկարծ, անսպասելի զգաստությամբ, նա նստեց, տագնապով լի աչքերն ուղղեց հարսի վրա և ամուր բռնեց նրա ձեռքը .

— Հարս, պարտականութուն կդնեմ վրեդ . . . Տղիս ըսա, օր ինչքան գեշ բան էնե աշխըրքի վրա, ես էնոր կներեմ, հմը իմ ավիաենական նզովքս ու անեծքս կուտամ, եթե մե օրըմ ձեռք տա Հեղնար ախպուրին . . .

— Ի՞նչ կըսես, հայրիկ, սարսռաց հարսը:

— Թող քանդե թեկուզ իմ քառսուն ախպուրներս էլ, էդոր մեջ սրբապղծութուն չկա, հմը հեղնար ախպուրն ուրիշ է, էնոր տակը գերեզման կա . . .

— Արար-աշխարք գիտե էդ բանը: Ընչի՞ պիտի քանդե, հայրիկ . . .

— Վո՞վ գիտե . . . Գուցցե թե հրաշքի հմար քանդե: Իմ ժամանակս մարդ էդպես բան մտքեն էլ չէր անցընե, հմը հիմի . . . Հիմի մարդն ստուգել կուզե

ասպածային հրաշքը . . .

— Ախր հրաշք չկա, հայրիկ, սուտ բան է:

Հրաշքը կա ավտրցողի համար, էդպես էլ կըսես իրան, հմը չավտցողը հրաշք չի տեսնի: Կըսես տղիս, օր Հեղնար ախպուրի հրաշքը ոնչ թե չոր քարի կամ թաց հողի մեջն էր, այլ իմ Ժամանակվաս մարդոց հավատացյալ հոգու . . . . Իսկ քեզի, ազիզ հարս ջան, հազար մնաս բարով . . .

Նույն վայրկյանին դրսում աղմուկ լսվեց: Հարսն արագ դուրս վազեց: Նախասենյակում լսվեց տղամարդու ձայն, ապա հարսի լացակումած ձայնը, որ շտապ ինչ-որ բան էր հաղորդում, որից հետո դուռը շրխկալով բացեց և սենյակ մտավ ուստա Մկրտչի որդին:

Ուստան արդեն մեռած էր:

2

Խաղաղ ու բաց-կապույտ՝ բացվեց առավոտն ուստա Մկրտչի սենյակում: Առավոտվա պես հանդարտ և անշշուկ՝ Գալուստն արթնացավ, կարծես քնի մեջ նա երկար ժամանակ ունկնդրել էր լռությանը:

Այն սենյակից, որտեղ մի օր առաջ նրա հայրն էր մեռել, նա նայեց դեպի լուսամուտի նուրբ, անիրական կապույտը: Երեկոյան Մանանը մոռացել էր փեղկերը ծածկել, և Գալուստն այժմ գոհ էր այդ մոռացության համար . նա տեսնում էր Ձորի Բողազի առավոտը, առաջինն այն առավոտներից, որոնք այլևս չէր տեսնելու նրա հայրը . . .

Տան առջևամասում, աղջամուղջի միջից, գծագրվել էր բարդիների սպիասակավուն բների շարքը: Բների այդ սյունաշարից այն կողմ՝ վերևում, որտեղ դիմացի լանջի ամենավերին փողոցն էր, լուսացող երկինքն ատամնավոր հորիզոնով իջել էր բնակարանների բարձր ու ցածր պատերի դեռ մութ շարքի վրա: Դռների վերևում դեռ պլպլում էին փողոցը լուսավորող նավթի լապտերները և փողոցում դեռ կատարյալ գիշեր էր:

Բների այդ սյունաշարից այն կողմ՝ ներքևում, որտեղ երկու տների արանքից երևում էր ձորի տափակ ու լայն հատակը, դեռ լրիվ խավարի մեջ հոսում էր սակավաջուր առվակի շարժուն խավարը:

Նայում էր Գալուստը սենյակի տաք կիսախավարից և զգում էր, թե ինչպես բարդիների գագաթներից իջնում էր զովությունը և առվակի ջրից բարձրանում էր զովությունը:

Մանանի մահճակալից լսվում էր քնածի հանդարտ շնչառությունը: Թվում էր, թե դրանից էր սենյակի և՛ խաղաղ ջերմությունը, և՛ խաղաղ կիսախավարը:

Եվ հանկարծ, սենյակն իր պատերի գորգերով և հատակի գորգերով, և գունատ-կապույտ և գունատ-կարմիր վերմակներով, անկյան փոքրիկ սեղանի վրա դեռ պլպլացող գիշերաճրագով Գալուստին թվաց դրսի հետ այնքա՛ն չառնչվող, այնքա՛ն ներփակ: Եվ առաջին անգամ, սրտի ծանր ճնշումով, նա զգաց դրսի նույն կարոտը, որն զգացել էր նրա հայրը՝ մեռնելուց առաջ, նույն սենյակից նայելով դեպի լուսամուտի այն կողմը . . . Գալուստն անմիջապես վեր կացավ, անշշուկ հագնվեց և բաց անելով դուռը, դուրս ելավ դեպի, աշխարհ:

Հազիվ դուռը բաց արած, նա լսեց ծառերի ու ջրի համատարած մեղմ խշշոցը զով լռության մեջ: Առավոտը, որ սենյակից երևում էր բաց-կապույտ և երազային, այժմ գունաթափ էր և իրական: Այստեղ ու այնտեղ, լուսաբացի սառնության մեջ, դեռ փայլում էին փոքրիկ լապտերները՝ արդեն անճառագայթ, ինքնամփոփ: Մի բարձր սյան վերևում միայնակ վառվում էր էլեկտրական մեծ լապտերը, որ թեթև օրորվում էր՝ երևի քաղաքի վրայով անցնում էր փոքրիկ քամի:

Լուսամուտափեղկերը, դռներն ու դարպասները դեռ փակ էին: Տների առջևի անպարիսպ բակերում և փողոցներում դեռ ոչ ոք չկար: Ծառերի ու ջրի համատարած մեղմ խշշոցը, որ լսվել էր առաջին վայրկյանին, այժմ դարձել էր անլսելի: Ամեն ինչ լուռ էր: Միայն փողոցներից մեկի անկյան ետևում մեկն ավլում էր մայթը: Մի կառապանի կտուրից հստակ բուրում էր խոտի դեզը, որի մի կողմում դեռ կծկվել էր վերջացած գիշերը:

Ինչ-որ հեռու, շատ հեռու փողոցից լսվեց երկաթե փականքի պաղ հնչյուն՝ բացվեց մի դարպաս: Ապա վերահաստատված լռության մեջ լսվեց դաուլի անշաապ, ընդհատ կտկտոցը: Վաղ լուսաբացի անդորրության մեջ այդ գվագը փափուկ էր և դուրեկան, որովհետև դաուլչին ոչ թե փայտերով, այլ մատներով էր խփում նվագարանի մաշկին: Նվագը մոտենում էր դանդաղաքայլ կառքի ընթացքով: Չտեսնելով անգամ, կարելի էր պատկերացնել նվագողին՝ կառքում նստած, կարմիր կողերով դաուլը գոգն առած, ողորկ ու կիսաթափանց մաշկին խփելիս:

Մի քիչ անց, հազիվ լսելի, հասան նաև զուռնաների հնչյունները՝ տոն պահողի միալար մեղեդին և դրա եղանակային ոլորտում՝ բուն զուռնայի ելևէջի: Եվս մի քիչ անց, փողոցի սալահատակի վրա լսվեցին ձիապայտերի մաքուր, անշտապ հնչյունները՝ կլանչ . . . կլունչ . . . Ըստ երևույթին, դանդաղ գալիս էին երկու կառքեր: Երբ դրանք ավելի մոտեցան, ձիապայտերի հնչյունները հանկարծ կտրվեցին՝ խլանալով դաուլի կտկտոցների մեջ, որոնք այժմ շրջապատված էին զուռնաների ախորժալուր հնչյուններով:

Անկյան ետևից երևաց առաջին կառքը, իսկ մի պահ հետո՝ միայն մի քայլ ետ ընկած, կողքով եկող երկրորդ կառքը: Մեկում նստած էին դաուլ-զուռնաչիների եռյակն ու երկու այլ մարդիկ, իսկ մյուսում՝ ևս երեքը: Բաց-կապույտ գույնի հաստ համազգեստ հագած կառապանները զվարթ նայում էին լուսաբացին: Կառքերի եկած փողոցներում, անշուշտ, քաղցր կիսարթնացել էին մարդիկ և այժմ հեռացող կառքերի ետևում նորից քնում էին՝ նվագով օրորված:

Կայնի՛ . . .

Կառապանները սանձերը ձգեցին: Այն կառքից, որտեղ նվաղողներն էին նստած, մեկը վար իջավ և մոտեցավ մի տան լուսամուտներին, որոնց փակ փեղկերը երկնագույն էին՝ լուսաբացի նման:

Օնե՛ս . . .

Նա ձեռքով թխթխկացրեց տախտակը: Մի վայրկյան դեռ պատասխան չեղավ:

Օնե՛ս, բղավեցին նաև կառքերի միջից, ապա մեկը դիմեց ներքևում գտնվողին . ամուր զարկ, Աղասի . . .

Նույն րոպեին, սենյակից լսվեց շրշոց, ապա շարժվեց լուսամուտափեղկի նիգը, որի կեռ ունեցող ծայրն ամրացված էր ներսում: Աղասին դուրս քաշեց այն և փեղկերը ետ ծալեց: Արձակ ու սև մազերով մի կին շրջանակներից մեկը բացեց դեպի ներս և դեմքը մոտեցրեց երկաթավանդակին:

Բարի լուս, քուր, ողջունեց Աղասին, Օնեսը տո՞ւնն է:

Դո՞ւն ես, եխպայր, ասսու բարին, տունն է,— շշնջաց կինը նոր արթնացածի խաղաղ, լուսաբացային շշունջով և հեռացավ դեպի սենյակի խորքի մթությունը: Այնտեղից լսվեց, թե ինչպես նա արթնացնում էր ամուսնուն ցածր ձայնով՝ մյուս քնածներին չխանգարելու համար .

Օնե՛ս, զարթի՛, Օնե՛ս, Աղասի եխպայրը քեզի կուզե:

Չէկա՞վ, անհամբերացան կառքերում:

Կուգա, հայտնեց Աղասին, մեկէլ կողքի վրա դարցավ . . .

Սպիտակեղենով և քնաթաթախ աչքերով, լուսամուտին մոտեցավ Օնեսը և խռպոտ հարցրեց .

Վո՞վ է:

Օնես, ես քու հոգուդ մեռնեմ, աղմկեցին կառքերից,— դուս արի՝ ազիզ ջան: Տո՛ւշ . . . Տո՛ւշ՝ Օնեսի հմար . . .

Արփաչայ կէրթանք, բացատրեց Աղասին: Հազի՛: Իրիկվրնե տեյմոր հիմի Ավետիքենց տունը քեֆ կէնեինք:

Օնեսը երկաթավանդակից նայեց դուրս .

Ավետի՛ք:

Ջան, բացականչեց նվագողների մոտ նստածը՝ ձեռքով անելով . — շուտ էրա:

Օնեսն սկսեց հագնվել՝ լուսամ ուտից չհեռանալով:

Էլ վո՞վ կա, հարցրեց նա:

— Սարգիսն է, Կարոն, Բագրատը:

Ըսել է՝ բոլորդ իստեղ եք, եզրակացրեց Օնեսը:

Սպասելով իրենց ընկերոջը, կառքում սկսեցին նվագել մեկն այն եղանակներից, որոնցով բացվում է լույսը Գյումրիում: Դաուլն այդ նվագի ընթացքում մնում է լուռ, և եղանակը ծորում է մեղմ ու անուշ, կարծես մեկը քթի տակ երգ է ասում առանց բառերի և խորը: Երբեմն զուռնան սահուն բարձրացնում է ձայնը և նույն կերպ նորից իջեցնում, որից հետո եղանակն ավելի խորն է դառնում և կարծես նիրհում է:

Նվագի ընթացքում Օնեսը հագնվեց, լվացվեց և դուրս ելավ փողոց:

Բարի լուս, դիմեց նա բոլորին:

— Ասսու բարին: Նստի՛, Օնես ջան, ուշացանք, շտապեցրին կառքերից:

Բագրատը վար ցատկեց, գրկեց Օնեսին, համբուրեց և տարավ իր նստած կառքը:

Արի՛, ազիզ ընկեր, արի՛, հրավիրեց Կարոն՝ տեղ անելով նրան փափուկ նստելատեղում: Ապա կանգնեց կառքի մեջ և ձայն տվեց . քշե՛ք . . .

Կառքերը շարժվեցին: Նվագը ցնցվեց և տեղահան լինելով, սկսեց նվագել: Մի րոպե թվաց, թե դա ոչ թե տարածությունը, այլ ժամանակն էր կուլ տալիս դաուլ-զուռնայի ձայնը . . .

Գալուստը դուրս ելավ ինքնասույզ վիճակից, նայեց հեռացող կառքերի ետևից, և նրա սիրտը սեղմվեց վշտի այն ծանր զգացումով, որ ահա գնում են իր հոր ամենամտերիմ և ամենավերջին ընկերները, իսկ իր հայրը չկա նրանց հետ . . .

Երբ վերջապես մեղեդին սուզվեց լռության մեջ՝ Ձորի Բողազի վաղ առավոտը նորից դարձավ համատարածորեն խաղաղ, անձայն: Գալուստը նայեց բարդիների համարյա անշարժ գագաթներին և չլսեց դրանց սոսափը, նայեց ջրին և չլսեց դրա կարկաչը: Եվ չհամարձակվելով խախտել լուսաբացի այդ հրաշալի պահը, վախենալով անգամ իր ոտնաձայներից, նա զգույշ քայլերով իրով ջրափ, անցավ սակավաջուր առվակը քարից քար, և բարձրացավ դեպի իր հոր կառուցած առաջին աղբյուրը:

Ջուրն այնտեղ հոսում էր զարմանալի վճիտ, ավելի վճիտ, քան երբևէ: Անշարժ կամարով այն ձգվել էր փայլուն խողովակից մինչև գուռ: Թվում էր, ուստա Մկրտչի կյանքն էր այն՝ անհայտությունից եկած և դեպի անհայտություն գնացած . . .

Ձորի Բողազում դեռ ոչ ոք չէր երևում: Առանձին կանգնած տները՝ ներքևում, և երկար փողոցները՝ վերևում, դեռ քնած էին անշշուկ: Ինչ-որ տեղից լսվեցին ճնճղուկների խուռն, գործունյա կանչերը, ապա բազմաթիվ թևերի մանր փոռոցները . երևի նրանք նստել էին դեռ դատարկ փողոցներից մեկում՝ հավաքելու համար այն գարին, որ դեղին երիզով ծորացել էր գիշերով անցած սայլերից, բայց այժմ ինչ-որ բանից անհանգստացած, նրանք թռան: Ջրափից քիչ բարձր գտնվող տներից մեկի անպարիսպ բակում զնգաց շան շղթան, ապա իր տախտակե բնի մեջ շունը լայն հորանջեց և ատամների ամուր շրխկոցով բերանը նորից փակեց: Այնտեղ, բակի առջևամասի ծառերից մեկի տակ, երեկոյից ի վեր, ինչ-որ երեխա մոռացել էր իր խաղալիքը: Ջրհորի վրա ամրացված ճախարակն անշարժ էր, բայց պարանի ազատ կախված ծայրը թեթև օրորվում էր մարդու համար աննկատելի հովից:

Մի տան դուռ բացվեց, դուրս ելավ կիսահագնված, արձակ մազերով մի հասած աղջիկ՝ մոր ոտնամանները ոտքերը գցած, և լուսամուտների կարմիր փեղկերը ետ ծալեց: Երկաթավանդակների և ապակիների ետևից ժպտացին ծաղկամանները՝ բացված ծաղիկներով: Աղջիկը գնաց ներս:

Հանկարծ ամենաբարձր բարդիների գագաթները պայծառացան: Ըստ երևույթին, ձորից այն կողմ, քաղաքից էլ այն կողմ, ինչ-որ հեռու տեղում, ծագեից արևը: Նրա լույսի տակ, սաղարթները, որ թաց էին, փայլեցին բազում ոսկիների

պես: Իսկ երբ արևածագի պահին հանկարծակի փչող և իսկույն ընդհատվող քամուց շարժվեցին տերևները, և արևի լույսը փոխնեփոխ ընկավ դրանց այլևայլ բազմությունների վրա, թվաց, թե բարդիներից ոսկի է թափվում աշխարհին, ոչ սովորական ոսկի, այլ այնպիսի, որը եղել է բոլոր ձորիբողազցիների երազը: Ձորի լռությունը, թեև չխախտված, այժմ լի էր ինչ-որ անըմբռնելի խլրտումով . դա՝ բնակարաններում արթնացել և կամ արթնանում էին մարդիկ:

Աննկատելի անցնում էր ժամանակը: Այժմ արևը ծառերի գագաթներով հոսել էր ավելի վար՝ օծելով համարյա բոլոր սաղարթները: Դրանից փողոցների և տների տեսարանը ներքևում թվում էր ավելի մուգ:

Եվ հանկարծ, այդ աշխարհի համատարած ստվերի մեջ, արևն ընկավ կտուրներից մեկի պռունգին կանգնած կարմիր և դեղին փետուրներով աքաղաղի վրա: Աքաղաղը վառվեց հրդեհի պես: Տների դեռ ստվերոտ ֆոնի վրա նա միակ պայծառ կետն էր: Երբ տաք ճառագայթներից աշխուժացած նա հեռացավ կուտ որոնելու, թվաց, թե արևն ինքն էր, որ մտավ ամպերի տակ, փողոցը նորից կորավ համատարած ստվերի մեջ: Բայց աքաղաղը երևաց հարևան կտուրի վրա՝ ավելի պայծառ, հետո երրորդ կտուրի վրա, չորրորդի . . . Կարծես մի խուրձ բոց, նա շրջում էր արևով հրդեհելու Ձորի Բողազը:

Եվ հանկարծ, անսպասելիորեն մոտիկ և բոլորովին անակնկալ, որոտաց գործարանային շչակը: Ձայնը շվալով անցավ ձորն ի մեկ՝ վերջնականապես արթնացնելով ու զգաստացնելով այն: Շչակի ձայնի ետևից, ինչպես բաց արված ճանապարհով, ներս հոսեց արևը և հեղեղեց Ձորի Բողազը:

Առավոտը վերջացավ:

3

Հոսում էր նվիրական Ախուրյանն իր հավիտենական խաղաղությամբ:: Ոչ խորն էր այն՝ մարդակուլ խորությամբ, ոչ լայն էր՝ անանցանելի լայնությամբ և ոչ սրընթաց՝ գահավեժ արագությամբ: Այն չէր աղմկում և դուրս չէր գալիս իր ափերից: Լուռ, ծանր ու մտասույզ, ձգվել էր նվիրական Շիրակի դաշտով դրա

վճիտ ջուրը: Այն առաջ էր շարժվում դանդաղ ու հանդիսավոր՝ իր հեռավոր ակունքը խրած հին հազարամյակների մեջ և ձգվելով դեպի նոր հազարամյակներ:

Հոսում էր քաղաքի արևմուտքում՝ մի երկարանիստ բլուրով քաղաքից պատնեշված: Բլուրը, սակայն, մի տեղով ճեղքված էր, և այդ ճեղքով էր քաղաքից դեպի Ախուրյան տանող ճանապարհը: Երբ խրախճանքի գնացողների կառքերը հասնում էին բլուրի այդ կտրվածքին, նվիրական գետի տեսարանը բացվում էր միանգամից: Նրանց աչքերի առաջ, բլուրի լանջից սկսած, լայն դաշտն աննկատելի վայրէջքով գնում-հասնում էր մինչև գետը, որը հոսում էր առանց դիք ափերի, միանգամայն հարթ տարածության վրա՝ ջուրն ափերի հարթությանը հավասար:

Գետի մյուս ափի վրա, դաշտի մի նեղ շերտից այն կողմ, կար մի ցածրիկ, քարքարոտ և երկարավուն բլրակ: Բայց դա շատ երկար չէր և միայն առջևումն էր փակում տեսարանը: Բլրակի մի ծայրում փռված էր արևով ողողված լայն դաշտը: Դրա պայծառության վրա, մոտիկ ու հեռու, իրարից անջատ գալարումներով, փայլում էին գետի արծաթե կտորները: Ջրափերի վրա, արևով ողողված: երևում էին բազմաթիվ բոստաններ: Իսկ բլրակի մյուս ծայրում երևում էին բազմակուտակ լեռներ, առջևինները՝ ցածր, ետևինները՝ բարձր, ապա ավելի բարձր, և ավելի, և ավելի, մի ամբողջ լեռնաշխարհ՝ կապույտով շղարշված: Բայց թվում էր, թե այդ կապույտը ոչ թե տարածությունն էր, այլ ժամանակը: Թվում էր, թե այնտեղ կանգնած էր պատմությունը, որ նայում էր դարերի մշուշից: Այդպիսի լեռնաստան չկար ուրիշ ոչ մի տեղ և այն թողնում էր հին մագաղաթի վրա նկարված աշխարհի տպավորություն:

Մարդիկ կառքերի միջից նայում էին այդ կապտավուն լեռնաստանին՝ բլրակի մի ծայրում, և ոսկեպայծառ դաշտին՝ մյուս ծայրում, ապա ուղիղ դիմացը՝ բլրակին: Բլրակի լանջն ի վեր փռված էր մի գյուղ՝ աստիճանաձև դասավորված տնակներով: Տնակների գորշության մեջ, այստեղ ու այնտեղ, գտնվում էին բազմաթիվ կալերի շրջանաձև արձակ տարածությունները՝ կալսելու համար գետնով մեկ փռված ոսկե հասկերով: Դրանց աչք կուրացնող պայծառ դեղին սկավառակների վրա, արևով ողողված, շրջանաձև քայլում էին դեղնակարմիր

եզների զույգերը՝ իրենց ետևից քարշ տալով կամի տախտակներ: Կամերի վրա կանգնած ոտաբոբիկ աղջիկները, որ սպիտակ լաչակներ ունեին գլխներին կապած, ճիպոտների թույլ շարժումներով շտապեցնում էին եզներին: Կարծր քարի կտորները, տախտակների մեջ խրած, մանրում էին գետնի վրա հաստ շերտով փռված հասկերը:

Կալերի մոտ վեր էին խոյացել բարդիները: Դրանց խիտ սաղարթների կանաչը և գետնին ընկած ստվերներն ավելի պայծառ էին դարձնում ոսկեղեն կալերի տեսարանը:

Գյուղի ներքևում, ջրափին, ամբողջապես ուռիների թանձր ստվերում թաքնված, ճյուղերի արանքներով հազիվ էր երևում ջրաղացը՝ միշտ խոնավ՝ մամուռից կանաչագույն դառած տախտակե խողովակներով:

Նվիրական գետի ափերն անծառ էին, ցերեկային արևի տակ արձակորեն ձգված: Միայն մի քանի տեղում կանգնած էին փոքրիկ ծառաստաններ, որ կարծես կանաչի, ստվերի ու զովի կղզյակներ լինեին շրջապատի դեղնած խոտերի, արևային լույսի և ջերմության մեջ:

Եվ դանդաղ մտրակում էին կառապաններն իրենց ձիերին, որոնք ծանրաքայլ իջնում էին գեղեցիկ հովիտը:

***

Կառքերը վերադարձան քաղաք, իսկ արհեստավորները սփռոց բաց արեցին առանձնակի կանգնած մի հով ուռենու ստվերում: Զուրը հոսում էր սփռոցի մոտով՝ թրջելով արևի տակ դուրս պրծած դրա մի ծայրը:

Դաուլ-զուռնաչիների նստելու համար գտան-բերեցին երեք քար: Նրանց առջև դրեցին ուտելիք, օղի և բաժակներ: Իսկ իրենք բոլորվեցին սփռոցի շուրջը՝ ծալապատիկ, տափակ: Բացակա ուստա Մկրտչին հատկացրին ամենալավ տեղը՝ սփռոցի գլխին՝ ծառի բնի տակ: Նրա կողքերին նստեցին Օնեսն ու Կարոն, սփռոցի մի կողմում՝ Բագրատն ու Սարգիսը, մյուս կողմում՝ Ավետիքն ու

Աղասին: Շարեցին յոթ բաժակ, օղի լցրեցին: Ուստա Մկրտչի բաժակի մոտ դրեցին խորոված՝ և այլ խորտիկների ամենալավ պատառները: Մնացին լուռ, գլխահակ: Գլխահակ լսեցին դաուլ-զուռնայի լացող եղանակը: Ապա, երբ նվագի վերջին հնչյունները մարեցին ծառի զով սաղարթներում, Աղասին վերցրեց իր բաժակը, խփեց ուստայի բաժակին և ասաց .

Ամմեն անգամվա պես առաջի կենացը կենացդ էղնի, ազիզ: Կյանքդ էնքան երկան էղնի, ինչքան օր, ափսոս, մահն է երկան . . .

Օնեսը նույնպես բաժակ վերցրեց .

Մշտական մեր սուփրի գլխուն նստած էղնիս, ախպեր: Ձեններս կտրենք, լսենք քեզի, լսենք ու չկշտանանք . . .

Կարոն նույնպես բաժակ վերցրեց .

Կյանքի մեջ մեզնեն վենձը դուն էիր, Մկրտիչ: Մահվան մեջ էլ մեզնեն վենձը դուն էղար: Կենացդ . . .

Բագրատը նույնպես բաժակ վերցրեց .

Գործդ արծըթե քառսուն ախպուր էղավ, ուստա: Վով անցավ՝ էնոնց ջուրը խմեց, ում տղեն անցավ՝ էնոնց ջուրը խմեց, ում թոռն անցավ՝ էնոնց ջուրը խմեց: Ում ծոռն անցնի՝ էնոնց ջուրը պիտի խմե: Ամմենքը կանցնին, գործդ չի անցնի, ուստա . . .

Սարգիսը նույնպես բաժակ վերցրեց .

Կյանքդ մե օսկեցե ախպուրմ էղավ, ուստա: Էդ ախպուրիդ գլխու քարը մեռավ, գռի քարը մեռավ, հմը օսկեցե ջուրդ էլի ավիտենական կամար է կապե աղեղնակի պես . . .

Ավետիքը նույնպես բաժակ վերցրեց .

Քու անմահութունիցդ, Մկրտիչ ախպեր, հիմի մահվան հրեշտակն ինքը մեռավ: Էլ վո՞վ պիտի մեր հոգիները վերցնե . . .

Բոլորը բաժակ խփեցին ուստայի բաժակին և խմեցին: Հետո Ավետիքը վերցրեց ուստայի օղին, շպրտեց նվիրական գետը: Զուրն օղին տարավ:

Բաժակները նորից լցրեցին:

Ախպըրտինք, դիմեց Աղասին նվագողներին, ուստիս սիրական երգը երգեք . . .

Եվ նորից խոնարհվեց իր բաժակի վրա:

Ծառի տակ, ստվերի մեջ, բուրում էր գով կանաչը: Հեռվում, արևի տակ, ջուրն էին մտել թուխ երեխաներ: Երբ նվագը լռեց՝ մոտակա փոքրիկ ծառաստանից լսվեց ինչ-որ թռչունի երազկոտ կանչը և իսկույն մարեց՝ հո՛-պո՛ . . .

Երբ էլ նայեիր նվիրական գետին, ջուրը գնում էր ու գնում՝ անկանգ, անվերադարձ: Երբեմն այն իր հետ բերում էր կանաչ մի տերև, երբեմն այնտեղից պսպղալով վեր էր ցատկում մի ձկնիկ և նորից ընկնում էր ետ: Դիմացի ափից մի ծառ իր ստվերն էր կախել արևոտ ջրի հոսանքի վրա . . .

Բագրատը նորից օղի լցրեց բոլորին և լուռ մնաց: Խոսք վերցրեց Ավետիքը, որի կյանքն անցել էր կամուրջներ կառուցեղով .

Ես էլ, Մկրտիչ ջան, քեզի պես նպատակ էի դրե, օր կյանքիս մեջ տասներկու կարմունջ պիտի շինեմ: Էդ բանը քեզի էլ էր հայտնի, էս ախպրտանցս էլ . . . Հիմի տասնմեկը շինել եմ, հըմը տասներկուսին ձեռքս չի էրթա . . . Ախր կյանքն անուշ բան է, ես էդ վերջի կարմունջն ի՞նչդ շինեմ . . .

Բոլորը լսում էին անշարժ, ինքնամփոփ:

Էս ափի վրա՝ կյանքն է: Ես գիտեմ, թե էն մեկել ափի վրա ինչ կա ընձի համար: Կարմունջն օր շինեմ, ուզեմ, թե չուզեմ, առաջի անգամ ես ինքս պիտի անցնիմ էնոր վրայով . . .

Նա շփեց ճակատը և շարունակեց .

Էդիկ իմ հին սովորութքս է, դուն լավ գիտես, Մկրտիչ ախպեր: Առաջի կարմունջս օր շինեցի, հեչ մարդ չվստահացավ՝ անցնի վրայով: Ես գերդաստանս նստեցուցի կարմընջի տակը՝ չայ խմելու, ինքս ֆայտոն նստած, գնացի-անցա: Տասնմեկ կարմընջի վրայեն խնդումով անցա, հըմ էս վերջինը սիրտս մահվան դող է քցե . . .

Նա անակնթարթ նայում էր օդուն .

Հմը ի՞նչ էնես, կարմունջ է հարկավոր . . . Զրանցքն էկել է, արտերով կանցնի, կտրել է սելերու ճամփեն: Էն օրն էլի էկան քովս, խնդրեցին, զարմացան . Էս ընչի՞ չես շինե, ուստա, էս ընչի՞ ես կանգ առե: Էս մեկն էլ շինե՝ էլ հարկավոր չէ: Էս մեկն էլ օր շինես՝ վաստակդ հերիք կհաշվենք, ձեռներես էկած փողը կուտանք քեզի, սրտներես անցած պատիվը, օր դուն նստիս, քու սօրվեցուցած աշկերտներուդ գործին աշես, ուրախանաս . . .

Ավետիքը թախիծով ժպտաց .

Աշեցի երեսներուն՝ ձեն չհանեցի: Ի՞նչ գիտնային, օր կարմունջն ուզելով՝ գերեզմանս կուզեին . . . Աշեցի, աշեցի ու խոսք տվի . . .

Նա վերցրեց բաժակը .

— Հիմի, Մկրտիչ ջան, դուն ընձի օրինակ էղնիս, օր սրտի հանգստութունով էս վերջի կարմունջս էլ վերջացնեմ . . .

Բոլորը նորից խմեցին, և վարպետի օրին նորից հանձնեցին նվիրական ջրին:

Զուռնաչիներն սկսեցին նվագել կիսաձայն, դաուլչին դաուլը խփեց կամացուկ և սկսեց երգել մի երգ, որ խրախճացողները լսել էին իրենց երիտասարդ հասակում, լսել էին պատանի հասակում, լսել էին մանուկ հասակում . . .

Հեռվում, արևի տակ, դեռ լողանում էին երեխաները . . .

***

Արևն իջավ:

Երբ Օնեսը նայեց վեր՝ դեպի աննկատելիորեն բարձրացող դաշտը, դրա բարձրում ձգված բլուրի կտրվածքում երևացին խրախճացողներին տանելու համար վերադարձող երկու կառքերը:

Աղասին բաժակների մեջ լցրեց վերջին օղին .

Ամմեն անգամվա պես վերջի կենացը կենացդ էղնի, ազիզ: Վո՞վ գիտե, մեկ էլ էսպես սեղան կնստի՞նք օխտը հոգով: Ինչքան օր մեր ճակտի վրա քրտինք կար՝ տվինք աշխըրքին: Հիմի մեր էրթըլու էսօր-էգուցն է: Էսօր հլը վեց բաժակ կվերցնենք քու կենացդ, հմը էգուց, կընա էղնի, օր էդոր կեսն էլ չմնա: Քանի օր հլը սաղ ենք ու կենդանի՝ կենացդ, ազիզ, քառսուն ախպուրներուդ կենացը, օր պիտի ապրին հուր-ավիտյան . . .